Հավելված N 1
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
«28» նոյեմբեր 2016 թ.
N 63-Ա հրամանի

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Ծրագրի անվանումը **Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնի պահպանում և զարգացում**
2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագիր	V
«Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում» ծրագիր	

3. **Ծրագրի իրականացման համար տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին** պայմանագիր.
N 10-15/I-12, «15»02.2019թ.
4. Հաշվետու ժամանակահատվածը. **2022թ. հունվար - դեկտեմբեր**
5. Կազմակերպության անվանումը **Հայաստանի ազգային ագրարային համալսարան**
6. Կազմակերպության ղեկավարի
ազգանունը, անունը, հայրանունը **Ուռուտյան Վարդան Էդիկի**
հեռախոսը **(+37412) 43-03-43**
էլեկտրոնային փոստը **h.tspnetsyan@anau.am**
7. Ծրագրի գիտական ղեկավարի
ազգանունը, անունը, հայրանունը **Ոսկանյան Աշոտ Երջանիկի**
հեռախոսը **091 21 54 57,**
էլեկտրոնային փոստը **ashot.voskan@gmail.com**
8. Հաշվետու ժամանակահատվածում
գիտական հրապարակումների ընդհանուր քանակը ___7_____/____2_____
(ՀՀ) (օտարերկրյա)
գիտաժողովներին ներկայացված զեկույցների ընդհանուր քանակը ___**4**___/_____2___
(ՀՀ) (օտարերկրյա)
9. Ծրագրի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները 6862.6 հազար ՀՀ դրամ
10. Ծրագրի գիտական ղեկավարի ստորագրությունը _____
11. Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը _____
«____» _____ 20.. թ.

Կ. Տ.

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսությունը կարելի է բնորոշել բազմակացութաձև, որտեղ գործում են գլխավորապես գյուղացիական, ընտանեկան տնտեսություններ, ինչպես նաև նկատելի են իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություններ: Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման հատվածում, արտադրատնտեսական ցուցանիշներում ակնհայտորեն գերակայում են գյուղացիական տնտեսությունները, որոնց թիվը հասնում է շուրջ 317 հազարի: Մեր կանխատեսումներով ՀՀ-ում գյուղատնտեսության վարումը դեռևս երկար ժամանակ կիրականացնեն, մեր չափանիշներով, փոքր և միջին գյուղացիական, ընտանեկան տնտեսությունները: Ակնհայտ է, որ գյուղացիական տնտեսությունների գործունեությունը, արտադրական հնարավորությունները և եկամուտների ներկա մակարդակը չի նպաստում գյուղատնտեսության դինամիկ զարգացմանը և չի ապահովում պարենային ապահովության անհրաժեշտ մակարդակ:

«ՀՀ-ում գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների հիմնախնդիրները և լուծման ուղիների առաջադրումը» ծրագիրն իրականացվել է հաստատված առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան: Հաշվետվությունում ներկայացվում է 2022թ. իրականացված աշխատանքների ամփոփումը.

1. **Ագրարային օրենսդրություն.** Ուսումնասիրվել է գյուղատնտեսական արտադրական առաջնային միավորների գործունեությունը կանոնակարգող իրավաօրենսդրական և նորմատիվային բազան, արդյունքում վեր հանել այն բացերը, որոնց լրամշակումը կնպաստի գյուղացիական տնտեսությունների՝ որպես տնտեսական միավորներ լիարժեքորեն կայանալուն:

ՀՀ-ում ընդունվել են ագրարային ոլորտի կարգավորմանը և զարգացմանը միտված ավելի քան 55 օրենքներ, սակայն ագրարային քաղաքականության իրականացման, գյուղացիական տնտեսությունների գործունեությունը կարգավորող համապարփակ վերջնական իրավական փաստաթղթեր դեռևս բացակայում են: Ագրարային ոլորտի զարգացման ուղենիշային փաստաթղթեր են հանդիսանում տարբեր ժամանակահատվածների համար մշակված ՀՀ գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունները և ՀՀ կառավարության ծրագրերը, ինչպես նաև դրանցից բխող մինչ այժմ իրականացված շուրջ 100 ճյուղային ու ոլորտային ծրագրեր:

Հատկանշական է, որ ագրոպարենային համակարգի գյուղատնտեսության հատվածում արտադրական գործունեություն են ծավալում գլխավորապես գյուղացիական տնտեսությունները, որոնք իրավաբանական անձի կարգավիճակ չունեն, սակայն հանդիսանում են տնտեսավարող սուբյեկտներ, ունեն սեփականության իրավունք գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ կամ վարձակալել են այն:

Հետազոտող խմբի ձևակերպմամբ գյուղացիական տնտեսությունն ազգակցական և/կամ սեփականությամբ կապված գյուղատնտեսական առաջնային արտադրական միավոր է, որն ունի ընդհանուր սեփականություն և սեփական մասնակցությամբ իրականացնում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրություն, ինչպես նաև պահպանում, տեղաբաշխում և իրացում:

Ուշադրության է արժանի «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքը, որտեղ շեշտադրվում է գյուղացիական տնտեսությունների վիճակագրական ռեգիստրի ձևավորումը: Օրենքն ուժի մեջ է մտել 2009թ., ուժը կորցրել է 2018թ., բայց այդպես էլ գյուղացիական տնտեսությունների վիճակագրական ռեգիստր չի ձևավորվել:

Ագրարային ոլորտի զարգացումը խոչընդոտող գործոնների, հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը ենթադրում է ՀՀ-ում ունենալ գյուղացիական տնտեսություններ, որպես առաջնային արտադրական միավորներ, գործունեությունը կանոնակարգող, զարգացմանը միտված օրենսդրություն: Վերջին 15 տարվա ընթացքում բազմիցս նախաձեռնվել են գյուղատնտեսության ու գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների մասին օրենքի մշակման աշխատանքներ, սակայն այն չի հասել Ազգային ժողովի նիստերում բովանդակային քննարկման:

2. **ՏԻՄ մարմինների մասնակցությունն ագրարային քաղաքականության մշակմանը և իրականացմանը.** ՀՀ-ում մինչ 2019թ. ագրարային օրենդրական, իրավական ակտերի և ընդհանրապես ագրարային քաղաքականության մշակման ու կյանքի կոչման գործառույթներ էր իրականացնում գլխավորապես ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը: Նախարարության լուծարումից հետո նշված գործառույթները փոխանցվեցին ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, որը հանդիսանալով պետական կառավարման առավելապես ֆունկցիոնալ մարմին, չի կարող կրել լիարժեք պատասխանատվություն, բազմակողմանիորեն և լայն թափով զբաղվել ագրարային ներուժի՝ հողի, ջրի արդյունավետ օգտագործման հարցերով, առավել ևս ստանձնել գյուղացիական տնտեսությունների գործունեության բազմազանեցման, համատեղ աշխատելու ձևերի ներդրման, կոոպերացիաների ձևավորման, մոնիթորինգի անցկացման, ռեեստրի վարման և այլ հարցերով: Ըստ մեզ, ագրարային ոլորտի զարգացման կոնտեքստում հատկապես բաց է մնացել առաջնային արտադրական միավորների հետ տարվող աշխատանքների շրջանակը: Ուստի «թույլ տեղերի» մեղմման առումով կարևորում ենք գյուղացիական տնտեսություններ – տեղական ինքնակառավարման մարմին – մարզպետարան կապի ու շղթայված աշխատանքի ներդրումը, որը հնարավոր է միայն տեղական ինքնակառավարման մարմնի գործունեությունն ու գործառույթները հստակեցնելու և համապատասխան իրավական դաշտ ձևավորելու արդյունքում: Այս տեսանկյունից ուսումնասիրության հիմնական օբյեկտ են հանդիսացել «Տեղական ինքնակառավարման մասին», «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «ՀՀ անասնաբուժության մասին», «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքները և «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով համայնքի ղեկավարը գյուղատնտեսության ոլորտում ունի 2 պարտադիր, 2 պատվիրակված և 2 կամավոր լիազորություններ: Բոլոր լիազորությունների ձևակերպումն ընդհանրական են և չեն պարունակվում այդ գործառույթների իրականացման մեխանիզմները, որոնք հնարավորություն կտան դրական ներգործություն ունենալ առաջնային գյուղատնտեսական միավորների, որպես տնտեսական միավորներ, առավել արդյունավետ գործունեությանը:

Արդյունքում եզրահանգում ենք, որ անհրաժեշտ է համայնքի ղեկավարի՝ գյուղատնտեսությանն առնչվող լիազորությունների առավել դետալային ներկայացում և դրանց իրականացման ապահովման գործուն մեխանիզմների ներդրում, հետևապես առաջարկում ենք ագրարային քաղաքականության իրականացման առումով «Տեղական ինքնակառավարման մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքներում կատարել արմատական փոփոխություններ:

Հավաքագրվել են առանձին համայնքների բյուջեների ցուցանիշներ, ուսումնասիրվել են համայքների, խոշորացված համայնքների բյուջեները և դրանց կառուցվածքը, համայնքային զարգացման ծրագրերը և գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների շրջանակում մեր կողմից իրականացվել է հարցումներ:

Համայքների խոշորացման արդյունքում գյուղատնտեսությանն առնչվող լիազորությունների փոփոխությունը, ըստ էության, տեղի չի ունեցել և առայժմ չկան օրենսդրական փոփոխություններ: Խոշորացման արդյունքում նախկինում գործող 615 համայնքների փոխարեն հանրապետությունում ձևավորվել են 70 համայնքներ: Ըստ էության ՀՀ համայնքների գերակշիռ մասն ունեցած ներուժով ունակ չէ և չի իրականացնում իրեն օրենքով վերապահված գյուղատնտեսական արտադրության զարգացման առնչվող լիազորությունները:

Միայն գործող մեխանիզմներով և առկա համայնքային ռեսուրսներով դժվար կլինի ապահովել առաջնային գյուղացիական միավորների զարգացում և արդյունավետության ապահովում: Անհրաժեշտություն կա ունենալու մասնագիտացված կառույցներ, որոնք իրենց գործունեությամբ, ծառայություններ մատուցելով կամ արտադրական գործունեություն ծավալելով կապահովեն նաև առաջնային գյուղատնտեսական միավորների, որպես տնտեսական միավորների, լիարժեք կայացմանը:

Միջհամայնքային համագործակցությունը տվյալ դեպքում կվերաբերվի երկու կամ ավելի հարևան համայնքների կողմից համատեղ գործունեությանը, համայնքային գյուղատնտեսական արտադրության և գյուղական զարգացման ոլորտում, որը հնարավորություն կընձեռի տեղական /համայնքային/ ագրարային քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները դարձնել առավել արդյունավետ, քան համայնքները դա կանեին առանձին:

Ձևավորվելիք միջհամայնքային միավորումը պայմանականորեն կկոչվի «Գյուղատնտեսական» միջհամայնքային միավորում, որտեղ համայնքի ղեկավարի՝ գյուղատնտեսությանն առնչվող լիազորությունների գերակշիռ մասը պատվիրակել համայնքների կողմից հիմնադրվելիք միջհամայնքային միավորմանը և նրան օժտել այդ լիազորությունների կատարման կարողություններով: Մշակվել է «Գյուղատնտեսական» միջհամայնքային միավորման կազմակերպական և աշխատակազմի կառավարման կառուցվածքները:

Ակնկալվում է, որ «Միջհամայնքային միավորման» լիարժեք գործունեության արդյունքում կբարձրանա գյուղատնտեսության վարման արդյունավետությունը, կավելանա գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալները և գյուղական բնակչության եկամուտները՝ արդյունքում կկրճատվի աղքատության մակարդակը:

3. **ՀՀ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված մի շարք ծրագրերի իրականացում.** Ուսումնասիրվել են հանրապետության տարածքում միջազգային օժանդակությամբ իրականացված համեմատաբար խոշոր ծրագրերը, որոնք վկայում են, որ ծրագրերի այն բաղադրիչների արդյունքներն են տեսանելի, որոնք վերաբերվում են օրինակ ջրագծերին, ճանապարհներին և նման ուղղվածության միջոցառումներին: Ինչ վերաբերվում է կազմակերպական, գյուղացիական տնտեսությունների միջև համագործակցության առաջավոր ձևերի ներդրմանը, հողերի խոշորացման գործընթացի ակտիվացմանը և այլն, ապա այն չի ունեցել զարգացման, տարածման միտում, ուստի հետազդեցությունը գոհացուցիչ համարել չի կարելի: Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության (ՀԳՌԿՄ) ծրագրով նախատեսվող «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվների լավագույն փորձ այդպես էլ ի ցույց չդրվեց և չունեցավ սիներգիկ էֆեկտ: Այդ են վկայում նաև իրականացված ծրագրերի մասով համակարգված դիտարկումներն ու մոնիթորինգը:

4. **Գյուղացիական տնտեսություններին պետական աջակցության ուղղակի և անուղղակի ձևերի կիրառման միջազգային փորձ.** Գյուղատնտեսության զարգացման միջազգային փորձը ցույց է տալիս, որ ոլորտի զարգացումը հնարավոր է միայն պետական աջակցության գործուն ձևերի կիրառմամբ: Դիտարկվել է Եվրամիության, ԱՄՆ-ի, Կանադայի, Բելառուսի, Ուկրանիայի և Ռուսաստանի Դաշնության պետական աջակցության ծրագրային մոտեցումները, որոնք կարող են կիրառելի լինել ՀՀ-ում և կապահովեն ցանկալի հետազդեցություն:

Հայաստանում առանձնակի կարևորություն ունի գյուղատնտեսությունում պետական աջակցության հետևյալ ծրագրային ուղղությունները՝ հացահատիկի արտադրության կայացման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացման, արտադրանքի իրացման, գյուղատնտեսական արտադրանքի գնման երաշխիքների տրամադրման, երիտասարդ ֆերմերների գործունեության աջակցման, գիտատեղեկատվախորհրդատվական ծառայությունների մատուցման օպտիմալացման և այլն: Այսպես օրինակ.

- «Հացահատիկային տնտեսության զարգացման» պետական աջակցության համալիր ծրագիր, որի շրջանակներում նախատեսել նպատակային սուբսիդավորման մոտեցումներ, սերմնաբուծության զարգացմամբ, հացահատիկային կուլտուրաների գնմամբ, պատվերների տրմամբ, վարկային, առևտրային և այլ բնույթի պայմանագրերի կնքմամբ զբաղվող կառույցի ձևավորում, որը հիմնված կլինի պետության և մասնավոր հատվածի համագործակցության հենքի վրա:

- «Երիտասարդ ֆերմերների գործունեության խթանման» պետական օժանդակության ծրագիր, որի շահառու կհանդիսանան առավելապես ՀՀ լեռնային և սահմանային տարածաշրջաններում գործունեություն ծավալող գյուղացիական տնտեսությունները: Հետազոտությունների արդյունքում յուրաքանչյուր տարի կսահմանվի ֆերմերային գործունեության «միջին ծախսերի» ցուցանիշ: Երիտասարդ ֆերմերը մշակված արտադրատնտեսական ցուցանիշների գրանցման ձևաթղթով կներկայացնի իր տնտեսությունում կատարած ծախսերը: Եթե ֆերմերի տնտեսության ծախսերը կգերազանցեն սահմանված «միջին ծախսերից», ապա գյուղացիական տնտեսությունը հնարավորություն կունենա ստանալ սուբսիդիա վնասի չափով:

Փոխհատուցումը կկատարվի միայն գյուղացիական տնտեսության ներկայացրած ֆինանսական հաշվետվության առկայությամբ:

5. **Ագրարային ռեսուրսների օգտագործում** – Հարցի կարևորությունից ելնելով՝ ուսումնասիրվել են հանրապետությունում գործունեություն ծավալող առանձին կառույցների իրականացրած հետազոտությունները, որոնք առավելապես ընդհանրական և նկարագրական են: Մեր իսկ ուսումնասիրություններն ու հարցման արդյունքները ուղղված են գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորներում ագրարային ռեսուրսների օգտագործման վիճակին ու ծառացած խնդիրներին:

Հողային ռեսուրսներ: Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների գյուղատնտեսական նշանակության հողերից վարելահողերի նպատակային օգտագործման վիճակը՝ 2020թ. 2015թ. համեմատ բոլոր մարզերում ունեցել է կրճատման միտում. 2020թ. ամենացածր նպատակային օգտագործում դիտվել են Վայոց ձորի և Տավուշի մարզերում համապատասխանաբար 23,89% և 25,32%, իսկ ամենաբարձրը՝ Արարատի մարզում՝ 66,67 տոկոս: Հանրապետության առումով վարելահողերի օգտագործումը կազմել է 50,25 տոկոս:

Հարցումներով վեր են հանվել նպատակային օգտագործմանը խոչընդոտող հետևյալ խնդիրները.

- ✓ Հողակտորների փոքր չափերը և միմյանց միջև մեծ հեռավորությունը,
- ✓ Հողի մշակման ագրոտեխնոլոգիական աշխատանքների (ծառայությունների մատուցման) բարձր սակագները,
- ✓ Ներդրանքների, հատկապես պարատանյութի և դիզելային վառելանյութի բարձր գները,
- ✓ Բնակլիմայական պայմանները. հաճախակի կրկնվող երաշտը, կարկտահարությունը և այլն,
- ✓ Ոռոգման ջրի օպտիմալ բաշխման կառուցակարգերի անկատարությունը,
- ✓ Ոռոգման առաջավոր ձևերի ձեռքբերման ու ներդրման դժվարությունները,
- ✓ Արտադրված արտադրանքի ապրանքայնության ցածր մակարդակը, իրացման, տեղափոխման և գնորդ գտնելու դժվարությունները,
- ✓ Ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը,
- ✓ Գյուղատնտեսական գործունեությունից սպասվելիք ցածր եկամուտները և այլն:

Ջրային ռեսուրսներ: Հանրապետության բուսաբուծության համախառն արտադրանքի 70-75%-ից ավելին ստացվում է ոռոգելի հողատարածություններից: Ջրային ռեսուրսների օգտագործումն ու պահպանումն ագրարային ոլորտի համար կարևոր կենսական նշանակություն ունի:

Հետազոտությունները ցույց են տվել, որ գյուղացիական տնտեսություններում ոռոգման համակարգի հետ կապված առկա հիմնական խնդիրներն են.

- ➢ Ջրամատակարարման համակարգերի մաշվածությունը և քայքայվածությունը, որոնց պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությունը հանգեցնում է արտահոսքի ու կորուստների (հատկապես ներհամայնքային ցանցերում): Հարցումները ցույց են տվել, որ գյուղացիական տնտեսություններին

հասանելի ջրի կորուստները բավականին բարձր են՝ 60-70 տոկոս, ինչը պայմանավորված է համայնքներում հին և մաշված ցանցերով ու ջրատարների մաքրման աշխատանքների գրեթե բացակայությամբ: Ներքին ցանցերը հանդիսանալով համայնքի սեփականություն՝ ֆինանսական միջոցների սղության պատճառով պատշաճ կերպով մաքրման և նորոգման չեն ենթարկվում, որպես հետևանք ոռոգման ջուրը տնտեսություններին չի հասցնում և հետևաբար հողը նպատակային չի օգտագործվում:

- Որոշ գյուղացիական տնտեսությունների համար խնդիր է ջրամբարներում կուտակված ջրի ոչ օպտիմալ ու անարդյունավետ բաշխումն է: Ըստ հարցված տնտեսությունների ջուրը հաճախ տրամադրվում է ոչ այն փուլում, երբ գնում է բերքի ձևավորում, այլ այն ժամանակ, երբ կարողանում են: Հոսքի մեծ մասը տնտեսությունները սկսում են ստանալ գարնանը և միայն փոքր մասը՝ ամռանը՝ ջրի առավելագույն պահանջի շրջանին, որի արդյունքում արդեն հուլիս և օգոստոս ամիսներին առաջ է գալիս ոռոգման ջրի պակաս, ջրամատակարարման ժամանակացույցի խախտում:
- Արարատի և Արմավիրի մարզերի ոռոգման համակարգի մաս են կազմում խորքային հորերը, որոնք աշխատում են պոմպերի միջոցով: Խորքային հորերի պոմպերը հաճախ խափանվում են և երկար ժամանակ է պետք գալիս դրանց վերանորոգման և նորից շահագործման համար, որը ևս իր հերթին առաջ է բերում համայնքներում ջրի մատակարարման ժամանակացույցի խախտման և ընդհանրապես ոռոգման ջրի պակասի:
- ՋՕԸ-ի կողմից ոռոգման ջրի դիմաց գումարների թերհավաքագրումը քրոնիկ բնույթ է կրում, որն հաճախ առիթ է հանդիսանում հետագայում գյուղացիական տնտեսություններին ժամանակացույցով անհրաժեշտ ոռոգման ջրի չմատակարարմանը: Այստեղ խնդիր է նաև պայմանագրային պարտավորությունների միակողմանի խախտումը, այսինքն չի իրականացվում պայմանագրով նախատեսված քանակով ոռոգման ջրի լրիվ մատակարարում, սակայն գյուղացիական տնտեսություններից վճարումներ պահանջվում է կատարել ամբողջությամբ:
- Կրկնակի վճարումները՝ կապված գերնորմատիվ հողերի ջրերի վարձավճարների հետ: Ջրի վարձը գանձելիս կիրառվող նորմատիվները մշակված են դեռևս խորհրդային տարիներին, որոնք փոփոխման կարիք ունեն:

Աշխատանքային ռեսուրսներ: Գյուղատնտեսության ոլորտում աշխատողների թիվը 2020թ. 2016թ. համեմատ գրեթե բոլոր մարզերում նվազել է: Մասնավորապես՝ Վայոց ձորի, Տավուշի և Լոռու մարզերում ցուցանիշը կրճատվել է համապատասխանաբար՝ 77,4, 67,1 և 60,9 տոկոսով: Աճ է գրանցվել միայն Արարագածոտնի՝ 24,6 և Սյունիքի մարզերում՝ 28,7 տոկոսով:

Գյուղացիական տնտեսություններում աշխատողների թիվը տարիների ընթացքում նույնպես կրճատվել է (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորներում աշխատողների թիվ 2017-2020թթ./հազ. մարդ/

Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի միայն 11%-ն է իրականացվում ֆորմալ, իսկ զբաղվածության ցուցանիշներում՝ պաշտոնապես գրանցված է զբաղվածների միայն 5.3%-ը:

Հարցումները վկայում են, որ բուն գյուղատնտեսությամբ զբաղված լինելու ժամանակահատվածը միջին հաշվով կազմում է 3-6 ամիս: Ըստ էության, եթե գյուղատնտեսությամբ զբաղվող ընտանեկան տնտեսություններն ամբողջ տարին զբաղված են լինում ընդամենը 36%-ը, ապա մնացած ժամանակաշրջանում, եթե զբաղված չեն ոչ գյուղատնտեսական աշխատանքով (օրինակ ուսուցիչ, ինժիներ կամ չունի արհեստ), ապա գտնվում են պարապուրդի մեջ: Ժամանակավոր (սեզոնային) աշխատողների թիվը ոլորտում կազմում է մոտ 15,6%, կադրերի հոսունության միջին մակարդակը՝ 5,1 տոկոս:

Համեմատաբար խոշոր գյուղացիական տնտեսություններն ունեն մասնագետ աշխատողների պակաս, ակնհայտորեն զգացնել է տալիս անհամապատասխանությունը պահանջվող աշխատանքի և դրա վարձատրման միջև, իսկ փոքր տնտեսություններում գյուղատնտեսական աշխատանքներով հիմնականում զբաղվում են ընտանիքի անդամները:

Ֆինանսական ռեսուրսներ: Հարցումները ցույց են տվել, որ գյուղացիական տնտեսությունների շրջանառու միջոցները ձևավորվում են գյուղատնտեսական գործունեությունից, ոչ գյուղատնտեսական աշխատանքներից (պետական համակարգ, արտագնա աշխատանք և այլն) և տարբեր նպատակների համար վերցրած վարկերը, հիմնականում գյուղատնտեսական:

Ըստ գնահատականների գյուղացիական տնտեսությունների շրջանառու միջոցների համալրման համար միջին հաշվով, տարեկան կտրվածքով անհրաժեշտ է շուրջ 400.0 հազ. դրամ, որի հիմնական մասն ապահովում են գյուղատնտեսական վարկերը՝ տարեկան պահանջը կազմում է ավելի քան 120 մլրդ. դրամ:

Միչև 2020-2021թթ. կառավարության կողմից գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով արտոնությունների տրամադրումը և դրանից հետո (վարկի գումարը՝ 3-15 մլն. դրամ) գյուղացիական տնտեսությունները գյուղատնտեսական բնույթի կամ բիզնես վարկեր ստացել են տարբեր ֆինանսական կառույցներից՝ ավելի բարձր տոկոսադրույքներով, ինչը հանգեցրել է գյուղացիական տնտեսությունների ծանր ֆինանսական դրության: Արդյունքում, կիրառվում է ձեռք բերված վարկային միջոցներով նախկին վարկային պարտավորությունների մարման պրակտիկա:

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում ՀՀ գյուղացիական տնտեսություններին 2018թ. տրամադրվել է 5282 միավոր ընդհանուր 21,9 մլրդ դրամի վարկ, իսկ 2021թ.՝

29487 միավոր վարկ, ընդհանուր՝ 72,9 մլրդ դրամի, աճը կազմել է 24205 միավոր վարկ՝ 43,3 մլրդ. դրամ կամ շուրջ 98 տոկոս: Հատկանշականն է, որ պետական աջակցության ծրագրերն ըստ տարածաշրջանների չունեն հավասարաչափ բաշխվածություն, միաժամանակ փոքր և միջին գյուղացիական տնտեսությունները, օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, չեն կարողանում օգտվել ծրագրերից:

Նյութատեխնիկական ռեսուրսներ: Բացի այն, որ գյուղացիական տնտեսությունները կարիք ունեն նոր և ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի, վիճակի վերլուծությունը ցույց է տվել, որ տեխնիկական միջոցների միջին սարքինության մակարդակը կազմել է 88.5%:

Գյուղացիական տնտեսություններում պահանջվող հիմնական միջոցների պակասի 50%-ը (ձեռքբերված) լրացվում է գյուղատնտեսական վարկերի, իսկ մնացածը՝ սեփական միջոցների հաշվին: Գյուղական համայնքներում գյուղատնտեսական տեխնիկայի փոխադարձ և համաձայնեցված օգտագործման մեխանիզմներ չեն կիրառվում, հիմնականում տարածված է անհատական գործելակերպը, որը հանգեցնում է տեխնիկա ունեցողի համայնքում գերակա դիրքի, ինչն էլ իր ազդեցությունն է թողնում տնտեսություններին մատուցվող ծառայությունների գների ձևավորման վրա, դրան նպաստում է նաև պահեստամասերի, վառելանյութերի, սարքերի թանկացման միտումները:

Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկան և սարքավորումները հիմնականում հին են և մաշված, ինչը հանգեցնում է բերքի կորստի, ցածր արտադրողականության, շահագործման ավելի բարձր ծախսերի: Այս պարագայում տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը նվազում է՝ վառելիքի նորմայից ավել օգտագործման, վերանորոգման և սպասարկման ծախսերի ավելացման և ծառայությունների առավել բարձր արժեքի և այլն: Հարցումները ցույց են տվել, որ սեփական տեխնիկա չունենալու պայմաններում փոքր գյուղացիական տնտեսությունների համար գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ընթացքում լրջագույն խոչընդոտ է դառնում մեքենատրակտորային սպասարկումների ծառայություններից օգտվելը: Այն արտադրական ծախսերում ունենում է բավականին մեծ տեսակարար կշիռ, որն էլ հաճախ պատճառ է հանդիսանում գյուղատնտեսական նշանակության հողերի ոչ նպատակային օգտագործման:

6. **Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների պայմանական խմբերի դասակարգում**. Պետության և գյուղացիական տնտեսությունների հիմնական նպատակը պետք է հանդիսանա գյուղատնտեսության զարգացում ապահովելու գործում իներցիոն ուղուց ինովացիոն գործելակերպին անցնելը, պետական աջակցության հասցեականության և հետազդեցության ապահովումը, հետևաբար տնտեսավարողի ապրանքայնության մակարդակի և եկամուտների բարձրացմանը: Այսինքն, կարևորված է ինչպես պետության, այնպես էլ տնտեսավարողի դերակատարությունը, և որպեսզի այս համագործակցությունը կայանա և արդյունքում ունենաք զարգացած գյուղացիական տնտեսություններ, օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջանում որոշակի չափորոշիչների հիման վրա նրանց դասակարգելը:

Հաշվի առնելով մեր կողմից ուսումնասիրված միջազգային փորձն ու հանրապետության գուղացիական տնտեսությունների առկա ներուժը՝ իրականացրել

ենք հացահատիկի, կարտոֆիլի և խաղողի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների դասակարգում: Մասնավորապես՝

Հացահատիկի արտադրությամբ զբաղվող տնտեսությունների դասակարգում – Հաշվի առնելով ցորենի արտադրության կարևորությունը ՀՀ պարենային անվտանգության ապահովման գործում՝ իրականացվել է ցորենի տնտեսական արդյունավետության ցուցանիշների հաշվարկ վերջին 5 տարիների կտրվածքով՝ նպատակ ունենալով ներկայացնել ինքնարժեքի և հետևաբար արդյունավետության փոփոխության դինամիկան:

Աղյուսակ 1. Ցորենի տնտեսական արդյունավետության միջինացված ցուցանիշները գյուղացիական տնտեսություններում

	Ցուցանիշները	Չափման միավոր	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
Ռոգելի	1 հա միջին բերքատվությունը	ցենտներ	38.8	38.3	38.9	40.5	37.5
	1 ց ինքնարժեքը	հազ. դրամ	7.8	8.1	8.0	8.3	10.4
	1 կգ ինքնարժեքը	դրամ	78.1	80.9	79.6	82.5	104.3
	1 կգ իրացման գինը	դրամ	114	113	126	130	150
	Զուտ եկամուտ 1 կգ-ի հաշվով	դրամ	35.9	32.2	46.4	47.5	45.7
	1 հա–ից ստացված բերքի արժեք	հազ. դրամ	441.7	432.2	490.1	526.5	562.5
	Զուտ եկամուտը 1 հա-ի հաշվով	հազ. դրամ	139.0	121	180.3	192.2	171.4
Անջրդի	1 հա միջին բերքատվությունը	ցենտներ	20.8	26.5	17.5	20.2	14.9
	1 ց ինքնարժեքը	հազ. դրամ	9.2	7.5	11.3	10.9	18
	1 կգ ինքնարժեքը	դրամ	92.5	74.7	113.1	109.4	179.7
	1 կգ իրացման գինը	դրամ	114	113	126	130	150
	Զուտ եկամուտ 1 կգ-ի հաշվով	դրամ	21.6	38.3	12.9	20.6	-29.7
	1 հա–ից ստացված բերքի արժեք	հազ. դրամ	237.1	298.9	220.5	262.6	223.5
	Զուտ եկամուտը 1 հա-ի հաշվով	հազ. դրամ	44.8	10.1	22.5	41.6	-44.3

Ռոգելի հողատարածություններում 1 հա բերքատվությունը 2021թ. 2017թ. նկատմամբ կրճատվել է 3.1%-ով, 1 ցենտների ինքնարժեքն ավելացել է 26.2 հազ. դրամով: Ավելացել են նաև ցորենի 1 կիլոգրամի ինքնարժեքն ու իրացման գինը՝ համապատասխանաբար՝ 26.2 և 36.0 դրամներով: Զուտ եկամուտը 1 կիլոգրամի հաշվով ավելացել է 9.8 դրամով, 1 հա-ից ստացված բերքի արժեքը՝ 120.8 հազ. դրամով: Նույն ժամանակահատվածի կտրվածքով զուտ եկամուտը 1 հա հաշվով ավելացել է 32.4 հազ. դրամով:

Անջրդի հողատարածությունների գծով՝ 1 հա բերքատվությունը 2021թ. 2017թ. նկատմամբ կրճատվել է 28.4%-ով, իսկ 1 ցենտների ինքնարժեքն ավելացել 8.8 հազ. դրամով: Ավելացել են նաև ցորենի 1 կիլոգրամի ինքնարժեքն ու իրացման գինը, համապատասխանաբար՝ 87.3 և 36.0 դրամներով: Անջրդի պայմաններում 2021թ. ցորենի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունները զուտ եկամուտ չեն ստացել՝ հիմնականում երաշտով, կարկուտով և սերմերի մատակարարման ճիշտ ժամանակացույցի չապահովմամբ պայմանավորված: Ուստի կրճատվել են նաև 1 հա-ից ստացված բերքի արժեքն ու զուտ եկամուտը:

ՀՀ-ում ցորենի արտադրության արդյունավետության ցուցանիշների հաշվարկման հիմք են հանդիսացել մեր կողմից մշակված տեխնոլոգիական քարտերը և «ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2020թ. պետական աջակցության»

ծրագրի հազարավոր շահառուների շրջանում իրականացված հարցումները: Հարցումները վկայում են, որ գյուղացիական տնտեսությունների մեծ մասը չեն հաշվառում ծախսերը, ինչը նաև դժվարացնում է ինքնարժեքի հաշվարկումը և տնտեսական արդյունավետության բարձրացման հնարավորությունների բացահայտումը: Կարող ենք փաստել, որ գյուղացիական տնտեսությունները ցորենի արտադրությունը կազմակերպում են ոչ համակարգված, նույնիսկ հախուռն կերպով՝ չկիրառելով կոոպերացման առավելությունները և լիարժեք չպահպանելով մշակության տեխնոլոգիաները:

Հետազոտական խմբի կողմից տնտեսավիճակագրական ռեգրեսիոն և կոռելյացիոն վերլուծության մեթոդների կիրառմամբ բացահայտվել է գյուղացիական տնտեսությունների դասակարգման ժամանակ կիրառված գործոնների փոխկապակցվածությունը, կարևորությունը ու նշանակալիությունը:

Աղյուսակ 2. Հացահատիկի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների դասակարգում

Ցուցանիշներ	Չափման միավոր	Գերփոքր	Փոքր	Միջին	Խոշոր	Առավել խոշոր
Վարելահող	հա	≤0.19	0.2-0.99	1-2.99	3-9,99	≥10
Անասնագլխաքանակ	գլուխ	≤1	1	2-3	5-10	≥10
Հասույթ	հազ. դրամ	≤ 60	61-300	301-900	901-3000	≥3000
Ապրանքայնության մակարդակ	տոկոս	≤ 10	11-24	25-30	30-70	≥70
Հիմնական միջոցների առկայությունը (տրակտոր ագրեգատներով, շարքացան, կոմբայն)	հատ	-	-	≤ 1	≥1	≥1
Տնտեսության վարման ձևը	-	էքստեն-սիվ	էքստեն-սիվ	էքստեն-սիվ	էքստենսիվ և ինտենսիվ	էքստենսիվ և ինտենսիվ
Փոխհարաբերվելու ձևերն այլ տնտեսությունների հետ	-	-	-	Բանավոր համաձայ-նեցում	Բանավոր համաձայ-նեցում	Բանավոր համաձայ-նեցում

Դասակարգման համաձայն հացահատիկի արտադրությամբ մասնագիտացված գերփոքր և փոքր տնտեսություններն ունեն 0,19-0,99 հա վարելահող: Միևնույն ժամանակ նշված տնտեսությունները կարող են ունենալ 1 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի: Ապրանքայնության մակարդակը կազմում է շուրջ 25%, հասույթը՝ 60-300 հազ. դրամ: Տնտեսություններում գյուղատնտեսական աշխատանքներն իրականացվում են ծառայություններ մատուցող տնտեսավարողների կողմից: Նման տնտեսությունները հացահատիկի արտադրությունը վարում են էքստենսիվ եղանակով: Վեգետացիոն ժամանակաշրջանում գերփոքր և փոքր տնտեսությունների գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավվում են ընտանիքի անդամները:

Հացահատիկի արտադրությամբ մասնագիտացված միջին տնտեսություններն կարող են ունենալ 1-2,99 հա վարելահող, 2-3 ԽԵԿ, հիմնական և սեզոնային աշխատողներ: Գյուղատնտեսության վարման ընթացքում անհրաժեշտ տեխնիկայի մի մասը լրացվում է ծառայություններ մատուցող տնտեսավարողների կողմից՝ բանավոր համաձայնության հիման վրա, այսինքն միջին տնտեսությունն ապահովված է տրակտորով (ագրեգատներով) և շարքացանով: Ապրանքայնության մակարդակը կազմում է շուրջ 30

տոկոս, իսկ հասույթը՝ 301-900 հազ. դրամ: Տնտեսությունը վարվում է հիմնականում էքստենսիվ եղանակով:

Հացահատիկի արտադրությամբ մասնագիտացված խոշոր և առավել խոշոր տնտեսություններն ունեն համապատասխանաբար 3-9.99 և 10 հա-ից ավել վարելահող: Բացի հացահատիկի արտադրությունից տնտեսությունները զբաղվում են նաև այլ հատիկաընդեղենային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրությամբ: Ունեն 5-ից ավել խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ընտանի թռչուններ, ապահովված են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով (տրակտոր, կոմբայն, տրակտորային կցասայլակ, խոտհնձիչ, կերահավաք, սերմնացան, շարքացան, գութան, կուլտիվատոր և այլն), ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն դրանք օգտագործել սեփական տնտեսություններում, այլ ծառայություններ մատուցել ավելի փոքր գյուղացիական տնտեսություններին: Ծառայությունների մատուցումն ու տնտեսությունների միջև այլ փոխհարաբերությունները հիմնականում իրականացվում են բանավոր համաձայնությամբ: Խոշոր և գերխոշոր գյուղացիական տնտեսություններն ունեն ինչպես հիմնական, այնպես էլ սեզոնային աշխատողներ: Ապրանքայնության մակարդակը խոշոր տնտեսություններում կազմում է 30-70 տոկոս, գերխոշորինը՝ 70 տոկոսից ավել, իսկ հասույթը՝ համապատասխանաբար՝ 901-30 մլն. դրամ և 30 մլն-ից ավել: Տնտեսությունները վարվում են ինչպես էքստենսիվ, այնպես էլ ինտենսիվ եղանակով:

Գյուղացիական տնտեսությունների դասակարգումը հնարավորություն է ընձեռում դրանցում առկա խնդիրները ևս խմբավորել:

Աղյուսակ 3. Հացահատիկային տնտեսություններում առկա խնդիրներն ըստ առաջարկվող խմբերի

Հ/Հ	Գերփոքր և փոքր տնտեսություններ	Միջին տնտեսություններ	Խոշոր և առավել խոշոր տնտեսություններ
1.	Որակյալ մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության պակաս, ինչպես նաև տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման սուղ հնարավորություններ		Որակյալ մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության պակաս
2.	Վերպատրաստումներին և դասընթացներին մասնակցության դժվարություններ		
3.	Ագրոներդրանքների (վառելիք, պարարտանյութ և այլն) դժվար հասանելիությունը, մատչելիություն և գնային քաղաքականություն		
4.	Իրացման գործընթացի դժվարություններ		Հացահատիկի ընդունման ցածր գին
5.	Ապրանքայնության ցածր մակարդակ		
6.		Մասնագետների ներգրավման սուղ հնարավորություններ	
7.	Ոռոգման առաջավոր ձևերի կիրառման ցածր մակարդակ և ջրային պաշարների ճիշտ բաշխման կառուցակարգերի բացակայություն		
8.	Հիմնական միջոցների անհասանելությունը և դրանց ձեռք բերման դժվարություններ	Տեխնիկա ձեռք բերելու սուղ հնարավորություն	
9.	Հողակտորների փոքր չափեր և միմյանց միջև մեծ հեռավորություն		Պայմանագրային հարաբերությունների բացակայություն

10.	Ֆինանսական միջոցների սուղությունն ու անհասանելիությունն		Բարձրորակ և բնակլիմայական պայմաններին հարմարեցված սերմերի պակաս
11.	Զբաղվածության դիվերսիֆիկացման ցածր մակարդակ		Վարելահողերի վարձակալության դժվարություններ

Նույն սկզբունքով իրականացվել է կարտոֆիլի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների դասակարգում:

Խաղողի արտադրությամբ զբաղվող տնտեսությունների դասակարգում –

Խաղողի արտադրության արդյունավետությանն առնչվող հարցերի ուսումնասիրման հիմքում դրվել է փաստացի ինքնարժեքի հաշվարկը: Խաղողի ինքնարժեքի վերլուծության նպատակն է եղել՝ բացահայտել ծախսերի փոփոխության պատճառներն ու բացահայտել ինքնարժեքի իջեցման ուղիները: Խաղողագործական տնտեսությունների շրջանում իրականացված հարցումների միջոցով հաշվարկվել է ուսումնասիրվող վերջին հինգ տարիների խաղողի փաստացի ինքնարժեքը՝ ըստ առանձին խաղողագործական տարածաշրջանների:

Ըստ ստացված արդյունքների խաղողի ինքնարժեքը համեմատաբար բարձր է Արարատյան հարթավայրում և դրա նախալեռնային գոտում, ինչը մի կողմից պայմանավորված է ագրոտեխնոլոգիական գործընթացները լիարժեք կատարելու ձգտմամբ, մյուս կողմից այստեղ բավական մեծ տեսակարար կշիռ ունեն խաղողի սեղանի սորտերի այգիները, որոնց ինքնարժեքը համեմատած տեխնիկական սորտերի որոշակիորեն բարձր է: Հաշվարկային շահույթի մեծության որոշումը կատարվել է հիմք ընդունելով ըստ ուսումնասիրվող տարիների տնային տնտեսությունների փաստացի վաճառված արտադրաքի ծավալները, իրացման միջին գները և միավորի ապահովող շահույթը:

Աղյուսակ 4. Խաղողի այգու մեկ հեկտարի հաշվով կատարված ծախսերի դինամիկան ՀՀ գյուղացիական տնտեսություններում

Տարիները	Ծախսերը մեկ հեկտարի հաշվով (հազ. դրամ)		
	Արարատյան հարթավայր և նախալեռնային գոտի	Վայոց ձորի խաղողագործական գոտի	Հյուսիս-արևելյան խաղողագործական գոտի
2017թ.	2161.0	1878.8	1855.9
2018թ.	2117.1	1840.6	1818.2
2019թ.	1992.2	1732.0	17109.6
2020թ.	1965.5	1708.7	1687.9
2021թ.	2137.1	1857.9	1835.4
Հինգ տարիների միջինը	2074.6	1803.6	1781.7

Ըստ ուսումնասիրվող ժամանակահատվածի շահութաբերությունը բավականին ցածր է եղել Վայոց ձորում, հատկապես 2019 և 2021 թվականներին՝ պայմանավորված խիստ ցածր բերքատվությամբ: Խաղողի շահութաբերությունը որոշակիորեն բարձր է Արարատյան հարթավայրում՝ հինգ տարիների միջինով այն կազմել է 34.8 տոկոս: Արարատյան հարթավայրի տնտեսություններում ամենաբարձր շահութաբերություն դիտարկվել է 2020թ.՝ պայմանավորված բարձր բերքատվության պայմաններում համեմտաբար ցածր ինքնարժեքով և վաճառքի բարձր գներով: Մյուս կողմից Վայոց

ձորում աճեցվող խաղողը, համեմատած Տավուշի մարզի, ունի ավելի բարձր ապրանքայնություն, ինչն էլ հնարավորություն է տվել այս մարզի խաղողագործական տնտեսություններին ապահովելու համեմատաբար մեծ շահույթի զանգված (Աղյուսակ 5):

Խաղողագործության վարման կատարելագործումը կարծես թե անհնար է առանց պետական աջակցության գործուն մեխանիզմների և կոոպերացման տարբեր ձևերի ներդրման:

Խաղողագինեգործական կոոպերատիվներն առաջարկում ենք ստեղծել երկու մոդելներով «թաց» և «չոր»: «Չոր» կոոպերատիվների դեպքում իրականացվելու է միայն խաղողի համատեղ արտադրության գործընթացը, իսկ «թացերի» դեպքում կոոպերատիվը կստեղծի իրեն պատկանող վերամշակող կարողությունները, ինչը հնարավորություն կտա վերամշակելու խաղողը և իրացնելու գինին՝ առավել նպատակահարմար ժամկետներում և պայմաններով, իրեն պահելով հավելյալ արժեքը:

Աղյուսակ 5. Խաղողի արտադրության ապահոված շահույթը ՀՀ գյուղացիական տնտեսություններում

		Խաղողի 1 կգ-ի ինքնար-ժեքը (դրամ)	Խաղողի 1 կգ-ի վաճառքի գինը (դրամ)	Խաղողի 1 կգ ապահոված շահույթը կամ վնասը (դրամ)	Խաղողի վաճ-առքի ծավալը (հազ. տոննա)	Ընդամենը շահույթ կամ վնաս վաճառված խաղողից (մլն դրամ)	Շահութա-բերության մակարդակ (%)
Արարատյան հարթավայր և դեղձավան	2017թ.	137.9	183	45.1	172.5	7779.7	32.7
	2018թ.	158.7	185	26.3	143.8	3781.9	16.6
	2019թ.	122.7	167	44.3	146.5	6489.9	36.1
	2020թ	93.4	149	55.6	186.9	10391,6	59.5
	2021թ.	121.8	152	30.2	200.9	6067,2	24.7
Վայոց ձոր	2017թ.	154.3	183	28,7	3.5	100,4	18.6
	2018թ.	142.5	185	42.5	4.5	191.3	29.8
	2019թ.	159.1	167	7.9	3.1	24,5	4.9
	2020թ	123.9	149	25.1	6.5	163,2	20.2
	2021թ.	146.3	152	5.7	3.2	18,3	3.9
Հյուսիս-արևելյան	2017թ.	150,1	183	32.9	6.4	210,56	21.9
	2018թ.	145,8	185	39.2	5.9	231,3	26.9
	2019թ.	119,2	167	47.8	7.1	339,4	40.1
	2020թ	105,7	149	43.3	8.3	359,4	40.9
	2021թ.	130	152	22	6.1	134,2	16.9

Խոշոր տնտեսությունների դեպքում, ըստ մեզ, կիրառելի և արդյունավետ կլինի տնտեսական ընկերակցությունների հիմնումը, ինչը հնարավորություն կտա համագործակցելու առանձին խաղողագործական և գինեգործական տնտեսություններին, հանդես գալու մեկ միասնական բրենդի ներքո:

Խաղողագործական տնտեսություններն ուսումնասիրվել են տարբեր հատկանիշներով՝ ըստ այգու մակերեսի /հա/, տարեկան հաշվարկային եկամտի /հազ. դրամ/, աշխատանքի և կապիտալի ներդրումների մեծության, նորամուծական տեխնոլոգիաների կիրառման, ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքի, առևտրայնացման աստիճանի և այլն: Խաղողագործական տնտեսությունների

հնգամակարդակ դասակարգման հիմքում դրվել են հետևյալ երկու հիմնական չափանիշները՝ տնտեսությունների տիրապետության տակ գտնվող այգետարածքի մեծությունը և հաշվարկային եկամուտների մեծությունը:

Աղյուսակ 6. Խաղողագործական տնտեսությունների թվաքանակը ըստ այգու մակերեսի և հաշվարկային տարեկան եկամտի

Տնտեսության անվանումը ըստ դասակարգման	Տնտեսությունների թիվը /միավոր/		
	Արարատյան հարթավայր և նախալեռնային գոտի	Վայոց ձորի խաղողագործական գոտի	Հյուսիս-արևելյան խաղողագործական գոտի
Գերփոքր */մինչև 0.10 հա այգեփարածք և մինչև 249 հազ. դրամ տարեկան հնարավոր եկամուտ/*	7850	460	868
Փոքր */0.10-0.49 հեկտար և 250-1499 հազ. դրամ/*	11420	1261	1708
Միջին */0.5-2.99 հա և 1500-7499 հազ. դրամ եկամուտ/*	24136	2363	7562
Խոշոր */3 – 9.99 հա և 7500 -24999 հազ. դրամ եկամուտ/*	1601	342	476
Գերխոշոր */10 հա և ավել այգեփարածք 25000 և ավել հնարավոր տարեկան եկամուտ/*	192	12	25

Մասնավորապես՝ ըստ առանձին գյուղատնտեսական գոտիների և տարեթվերի հաշվարկվել է խաղողի արտադրության տնտեսական արդյունավետությունը:

ՀՀ խաղողագործության վարման տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնական ուղիներից է ինտեգրված և կոոպերացված գործելաոճի ներդրումը: Առանձին խմբերում ծառացած խնդիրների լուծման համար անհրաժեշտ կլինի համագործակցության և կոոպերացման տարբեր ձևերի կիրառումը:

1. Գերփոքր և փոքր խաղողագործական տնտեսությունների համար նպատակահարմար կլինի կիրառել նպատակային սուբսիդավորում և սպառողական կոոպերտիվների ձևավորման պրակտիկան: Այս պարագայում սպառողական կոոպերատիվներն իրենց գործունեությունը պետք է ուղղեն խաղողի արժեշղթայում իրացման գործընթացի կազմակերպման օպտիմալացմանը, ինչը մի կողմից հնարավորություն կտա այս խմբերի տնտեսություններին մոտիվացվելու և բարձրացնելու խաղողի ապրանքայնության մակարդակը, մյուս կողմից վերամշակողները խույս չեն տա գործ ունենալ փոքր ծավալով խաղող իրացնող բազմաքանակ սուբյեկտների հետ, քանի որ այս դեպքում հնարավորություն է ընձեռնվում գործ ունենալ միավորված կողմի հետ և կիրառել պայմանանագրային կարգավորիչ երկկողմ հարաբերությունները:

2. Միջին և խոշոր խաղողագործական տնտեսությունների համար նպատակահարմար կլինի սուբսիդավորման և պետական կարգավորման հասցեական մոտեցումները՝ կիրառելելով արտադրական կոոպերացման տարբերակը, ինչը հնարավորություն կտա արտադրությունը կազմակերպել առավել խոշոր մակերեսներում,

բարձրացնելու մեքենայացման մակարդակը, ներգրավելու լրացուցիչ աշխատուժ և ֆինանսական ռեսուրսներ:

3. Խոշոր տնտեսությունների դեպքում, կիրառելի և արդյունավետ կլինի պայմանագրային կոոպերացիայի տարբերակը, ինչը հնարավորություն կտա համագործակցելու առանձին խաղողագործական և գինեգործական տնտեսություններին, տեղական ինքնակառավարման մարմինների օժանդակությամբ հանդես գալու մեկ միասնական բրենդի ներքո, արդյունավետ արտադրական և մարքեթինգային գործունեություն ծավալելու շուկայում:

Խաղողագործական տարածաշրջաններաում առաջնային արտադրական միավորների հիմնախնդիրների լուծման և ճյուղի կայուն զարգացման հնարավորությունների ստեղծման առումով հեռանկարային կարող է լինել կլաստերիզացիայի զարգացումը: Խաղողագինեգործական կլաստեր նախագծելիս որպես միջուկ կարող են հանդիսանալ խաղողի արտադրությամբ զբաղվող մասնագիտացված ֆերմերային տնտեսությունները, ինչպես նաև առաջատար վերամշակող կազմակերպությունները: Մոդելում նախատեսել է պետք ակտիվ և շահագրգիռ համագործակցություն պետական կառույցների, գիտակրթական հաստատությունների, ներդրանքներ մատակարարողների, միջազգային կազմակերպությունների և այլ ագրարային ոլորտին առնչվող սուբյեկտների հետ:

Մեր համոզմամբ ՀՀ-ում պարենային անվտանգության համակարգի զարգացման ցանկացած ռազմավարություն և պարենային անվտանգության հիմնախնդրի կարգավորման միասնական ու արդյունավետ քաղաքականություն պետք է ներառեն այնպիսի բաղադրիչներ, հաջորդական գործողություններ, որոնք կապահովեն ապրանքային արժեշղթաների բոլոր օղակների և հատկապես գյուղատնտեսական առաջնային արտադրողների դերի արժևորմանն ու ամրապնդմանը, գյուղացիական տնտեսությունների կայացմանն ու զարգացմանը:

«ՀՀ-ում գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների հիմնախնդիրները և լուծման ուղիների առաջադրումը» ծրագրի իրականացումն ակընհայտ է դարձնում ագրարային հատվածի զարգացման և հատկապես գյուղատնտեսության օրգանական կապը գյուղացիական տնտեսությունների կայացման տեմպերից: Գյուղական տարածաշրջաններում արտադրական, սոցիալական, ֆինանսական ժամանակակից ենթակառուցվածքների առկայությունն ուղղակիորեն և անուղղակիորեն կնպաստեն գյուղացիական տնտեսությունների նպատակային գործունեությանը՝ բիզնես տարրերի շարունակական արմատավորմանը: Ագրարային ոլորտի կառավարման ու քաղաքականության մշակման և իրականացման կենտրոնական, տարածքային, տեղական մարմինների գործառույթների հավասարակշռումը կտանի տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների հզորացմանը և դերակատարության ակտիվացմանը, փոքր գյուղացիական տնտեսությունների կոոպերացման, հասցեական աջակցության, իրազեկվածության բարձրացման և կառավարման բոլոր մակարդակներում համագործակցության արդյունավետ և շահագրգռող կառուցակարգերի ու մոտեցումների կիրառությանը:

Միջազգային կազմակերպությունները, հայաստանյան մասնագետների ներգրավմամբ, իրականացնում են ագրոպարենային հատվածի և գյուղական

տարածքների զարգացման ծրագրեր, մասնավորապես՝ Պարենի համաշխարհային ծրագիրը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատաշուկայի ուսումնասիրություն՝ գյուղական համայնքներում», Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի և ՀԱԱՀ համատեղ «Գյուղատնտեսության ճգնաժամը Հայաստանում» ու ՀԱԱՀ Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնի «ՀՀ-ում գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների հիմնախնդիրները և լուծման ուղիների առաջադրումը», որոնք միմյանց փոխլրացնում են և հրապարակումներով, զեկույցներով հանդես գալով ինչպես տեղական, այնպես էլ միջազգային գիտաժողովներում, առաջադրում են եզրականգումներ ու առաջարկություններ առավել արդյունավետ դարձնելու մշակվելիք և իրականացվելիք ՀՀ ագրարային քաղաքականությունը: